ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

17.09.2013թ.
210-ի 3

ՀՀ էներգետիկայի եւ բնական պաշարների
նախարար պարոն Արմեն Մովսիսյանին

Տեղեկատվություն ստանալու կրկնակի հարցում

Հարգելի պարոն Մովսիսյան,

2013թ.-ի օգոստոսի 20-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը տեղեկություն ստանալու գրավոր հարցմամբ դիմել էր Ձեզ՝ խնդրելով տրամադրել "Գլոբալ Գոլդ Մայնինգ" ՍՊԸ-ի եւ ՀՀ Կառավարության միջեւ 2008թ.-ի փետրվարի 20-ին կնքված համաձայնագրի պատճենը: ՀՀ էներգետիկայի եւ բնական պաշարների նախարարությանը նախարարությունը էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրել էր հղումով պատասխան՝ հայտնելով, որ խնդրվող համաձայնագիրը գտնվում է ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում: Ուստի, ԻԱԿ-ը նույնաբովանդակ հարցմամբ դիմել է նաեւ ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը: ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը հայտնել է, որ համաձայնագիրը 2008թ.-ին փոխանցվել է ՀՀ էներգետիկայի եւ բնական պաշարների նախարարությանը եւ գտնվում է էներգետիկայի եւ բնական պաշարների նախարարությունում:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ եւս մեկ անգամ խնդրում ենք տրամադրել “Գլոբալ Գոլդ Մայնինգ” ՍՊԸ-ի եւ ՀՀ Կառավարության միջեւ 2008թ.-ի փետրվարի 20-ին կնքված համաձայնագրի (մամուլում հայտնի Հաշտության համաձայնագիր անվամբ) պատճենը:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կից ներկայացնում ենք ՀՀ էկոնոմիկայի նախարարության պատասխան գրության պատճենը:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան